ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՄԵԾ ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՄԱՏԹԵՈՍ 24

1 Երբ Հիսուսը տաճարից դուրս էր եկել և գնում էր, աշակերտները մոտեցան, որ նրան տաճարի
շինվածքը ցույց տան: 2 Հիսուսը նրանց ասաց. Տեսնո՞ւմ եք այդ ամենը: Ճշմարիտ եմ ասում ձեզ.
այդտեղ քարը քարի վրա չի մնալու, որ չքանդվի: 3 Մինչ նա նստած էր Ձիթենյաց լեռան վրա,
աշակերտներն առանձին մոտեցան նրան ու ասացին.

Ասա՛ մեզ, ե՞րբ են դրանք լինելու, և ո՞րն է լինելու քո գալստյան ու աշխարհի վերջի նշանը:

*4 Հիսուսը պատասխանեց ու ասաց նրանց. Զգո՛ւյշ եղեք, որ որևէ մեկը ձեզ չխաբի, **(planaō)** 5*
որովհետև շատերն իմ անունով կգան ու կասեն. "Ես եմ Քրիստոսը", և շատերին կմոլորեցնեն
***(planaō)**: 11 Եվ բազում սուտ մարգարեներ են ելնելու և շատերին մոլորեցնելու **(planaō)**: 24 Որովհետև*
*ելնելու են սուտ քրիստոսներ ու սուտ մարգարեներ և մեծ **<u>նշաններ</u>** ու **<u>հրաշքներ</u>** են ցույց տալու, որ*
*եթե հնարավոր լինի, ընտրյալներին էլ մոլորեցնեն **(planaō)**:*

- *Հունարեն **πλανάω (planaō)** բառը շատ կարևոր է Սուրբ Գրքում, հատկապես երբ խոսքը վերաբերում է վերջին օրերի զգուշացումներին:*

  ***Planaō**-ն միայն սխալվելու մասին չէ. այն նշանակում է **մեկին ակտիվորեն շեղել** ճշմարտությունից: Սա միտումնավոր մոլորեցում է, որ ունի հոգևոր հետևանքներ:*

- ***Planaō-ն համաշխարհային ազդեցություն ունի՝ կառավարությունների, մշակույթի և նույնիսկ կրոնական կառույցների մեջ (Հայտ. 13):***

  *Մոլորեցնում էր **(planaō)** երկրի վրա բնակվողներին այն նշաններով, որ նրան էին տրվել գործելու գազանի առաջ՝ ասելով երկրի բնակիչներին... (Հայտ. 13.14):*

  *Եվ բռնվեց **գազանը**, նրա հետ նաև սուտ **մարգարեն**, որ նրա առաջ նշաններ էր գործում, որոնցով մոլորեցնում էր **(planaō)** նրանց, ովքեր գազանի դրոշմն ընդունեցին, և նրանց, ովքեր նրա պատկերին երկրպագեցին: Նրանց երկուսին էլ ողջ-ողջ ծծմբով այրվող կրակի լճի մեջ գցեցին (Հայտ. 19.20):*

  *Նա բռնեց վիշապին՝ այն առաջին օձին, որ դևն է և սատանան, և հազար տարով կապեց նրան: Նրան գցեց անդունդը, փակեց ու վրան կնիք դրեց, որ այլևս ազգերին չմոլորեցնի **(planaō)**, մինչև հազար տարին լրանա. դրանից հետո նա փոքր ժամանակով պետք է արձակվի (Հայտ. 20.2-3)*

I. ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱԼԻՍ Է ԴԻՎԱՅԻՆ ՈԳԻՆԵՐԻՑ

Հիմնական նպատակը հավատքը թուլացնելն ու հավատքից հեռացնելն է

*Ա Տիմոթեոս 4.1 – Հոգին հայտնապես ասում է, որ վերջին ժամանակներում ոմանք **հավատից կհեռանան** և ուշադրություն կդարձնեն մոլորեցուցիչ **(planaō)** ոգիների ու դևերի վարդապետություններին:*

*Ա Հովհաննես 5.4 – որովհետև ամեն ոք, ով Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Սա՛ է այն հաղթությունը, որ **աշխարհին հաղթեց**, այսինքն՝ **մեր հավատը**:*

Խաբեության ոգին մարդկանց հեռացնում է կենդանի հավատքից՝ փոխարինելով այն «հարմարավետ» բայց դատարկ ավետարանով:

*Պողոս Առաքյալը զգուշացնում է, որ ինչպես օձը խաբեց **(planaō)** Եվային, այնպես էլ հավատացյալների մտքերը կարող են ապականվել **այլ ոգու** կողմից, որ **քարոզում է սուտ ավետարան** (Բ Կոր. 11.3–4):*

1. ***Չկա Զղջում (Ապաշխարություն)***

   «Արդյո՞ք Աստված իսկապե՞ս ասաց...»:

   Եթե ասենք, թե մեղք չունենք, ինքներս մեզ ենք խաբում, և մեր մեջ ճշմարտություն չկա (Ա Հով. 1.8):

2. ***Չկա Սրբացում***

   Աստծո կամքը սա է՝ ձեր սրբությունը, որ հեռու մնաք պոռնակցությունից (Ա Թես. 4.3):

3. ***Տալիս է Սուտ Հույս***

   Շատերը կասեն. «Տե՛ր, Տե՛ր», բայց Քրիստոսը կպատասխանի. «Ես երբեք ձեզ չեմ ճանաչել»:

- ***Վերջին օրերում խաբեությունը բացահայտ սուտ չի լինի. այն կլինի «համարյա ճշմարտություն»:***

  *Եվ տեսա՝ **վիշապի**, **գազանի** և սուտ **մարգարեի** բերանից երեք պիղծ ոգիներ էին ելնում՝ նման գորտերի: Քանի որ նրանք դևերի ոգիներ են, նշաններ գործելիս... Ահա գալիս եմ, ինչպես գողը. երանի՜ նրան, ով արթուն է և պահում է իր զգեստները, որ մերկ ման չգա, ու նրա ամոթանքը չտեսնեն (Հայտ. 16.13-16):*

II. ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԽԱԲԵՈՒԹՅԱՆ ՈԳԻՆ

- ***Աստծո Խոսքի միջոցով***

  Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լույս՝ իմ ճանապարհի համար (Սաղ. 119.105)

- ***Սուրբ Հոգու առաջնորդությամբ***

  Սակայն երբ նա՝ ճշմարտության Հոգին, գա, ձեզ կառաջնորդի դեպի ամբողջ ճշմարտությունը, որովհետև ինքն իրենից չի խոսի, այլ կասի, ինչ որ լսի. և գալիք բաների մասին կպատմի ձեզ (Հով. 16.13)

- ***Զանազանությամբ, աղոթքով և զգոնությամբ***

  Սիրելինե՛ր, ամեն հոգու մի՛ հավատացեք, այլ փորձե՛ք հոգիները, թե արդյոք Աստծո՞ւց են, որովհետև բազում սուտ մարգարեներ են աշխարհ եկել (Ա Հովհաննես 4.1):

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ